ԱՐԱԲԿԻՐ
առողջության կենտրոն
ԵՐԵՎԱՆ

ք.Երևան-12 Հ.Քոչարի 21
Հեռ.26-24-16

г.Ереван -12 Г.Кочара 21
Тел. 26-24-16

12 « հունիսի » 2026թ.
N 039-411

<< Ս ԵՎ Գ գրուպ >> ՍՊԸ – Ի
ՏՆՕՐԵՆ՝ Վ. Թառլանյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Երևանի << Արաբկիր>> ԱԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և << Ս ԵՎ Գ գրուպ >> >> ՍՊԸ-ի (այսուհետ Վաճառող) միջև 2026թ -ի մայիսի 5-ին կնքվել է պայմանագիր, համաձայն որի Պայմանագրի շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքը: Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարումը իրականացվել է ժամկետին համաձպատասխան, սակայն մատակարարված ապրանքի տեխնիկական բնութագիրը չէր համապատասխանում պայմանագրով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով Երևանի << Արաբկիր>> ԱԿ ՓԲԸ-ն որոշել է 2026թ. մայիսի 5-ին կնքած Պայմանագիրը նշված չափաբաժնի մասով միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 10 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները՝ համապատասխանաբար 250000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի և 375000 (երեք հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամի չափով, վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին (ԱՄԻՕ բանկ 1150012919)

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք որոշում կայացնել << Գնումների մասին >> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն << Ս ԵՎ Գ գրուպ >> ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Հարգանքով՝
Տնօրեն Կ. Խաչատրյան